ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3502-Ա « 26 » հոկտեմբերի 2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Խաչ-Արմ» ՍՊ և «Էլ-Գա-Ման» ՍՊ ընկերություն-ների /Կոնսորցիում/ (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2022 թվականի նոյեմբերի 9-ին կնքված N «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/15» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 1.1-րդ կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի «Շտապօգնություն» ՓԲԸ N 1 ենթակայանի շենքի տանիքի և ջեռուցման համակարգի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից չեն պահպանվել պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված աշխատանքների կատարման պահանջները:

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից 10.05.2023թ., 15.05.2023թ., 29.05.2023թ. և 08.05.2023թ. «Խաչ-Արմ» ՍՊ ընկերությանն է հասցեագրել համապատասխանաբար թիվ Ն/78549-23, 16/82144-23, 16/93828-23, 16/77661-23, գրությունները՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու վերաբերյալ, իսկ 04.10.2023թ. թիվ 16/181033-23 գրությամբ սահմանվել է ողջամիտ ժամկետ՝ մինչև հոկտեմբերի 18-ը պատճառված վնասը վերականգնելու մասին, այնինչ ներկայացված գրություններին որևէ պատասխան չի տրվել և Ընկերության կողմից աշխատանքների կատարման արդյունքում շենքին պատճառված վնասները չեն վերացվել:

Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև պայմանագրի 3.1.4-րդ կետի «դ» ենթակետի պահանջով՝ միակողմանի /մասնակի/ լուծել է կնքված պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը

հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հոկտեմբերի 19-ին և պայմանագիրը հոկտեմբերի 20-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 2-րդ մասով.

1. «Խաչ-Արմ» ՍՊ և «Էլ-Գա-Ման» ՍՊ ընկերություններին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ